Ա. ԱՂԱՍՅԱՆ, Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, Վ. ՂԱԶԱՐՅԱՆ. Հայ արվեստի պատմություն, *Երևան, «Զանգակ-97» հրատ., 2009, 576 էջ:*

Հայ կերպարվեստի գիտական ուսումնասիրությունն ավելի քան դարավոր պատմություն ունի, որի ընթացքում ընթերցողի սեղանին են դրվել նրա տասնյակ վարպետներին, դպրոցներին, ուղղություններին նվիրված մեծաթիվ հրատարակություններ: Դրանց ցանկում կան նաև ընդհանրացնող բնույթի աշխատություններ, որոնց մեջ ամփոփվում է ազգային գեղարվեստական մշակույթի՝ այս կամ այն դարաշրջանում անցած ուղին: Սակայն, որքան էլ զարմանալի է, այդ աշխատություններից և ոչ մեկը չի շարադրվել մայրենի լեզվով ու չի ընդգրկել պատմական ողջ նյութը՝ նախնադարից մինչև մեր օրերը:

Այդ բացը լրացնելու մտահղացումը ծնվել էր դեռևս տարիներ առաջ՝ կոնկրետանալով հատկապես մեր դարասկզբին, երբ Հայաստանի մշակութային հանրությունը, ինչպես նաև սփյուռքահայության մի մասը բախվեց հայ կերպարվեստի պատմության համապարփակ ու պատշաճ դասագիրք ունենալու անհրաժեշտությանը: Եվ ահա 2009-ին, «Զանգակ–97» հրատարակչության ու հանրապետության առաջատար մասնագետներից համալրված հեղինակային կոլեկտիվի ջանքերով լույս տեսավ վաղուց սպասված «Հայ արվեստի պատմություն» վերտառությամբ շքեղ հատորը, որն արդեն արժանացել է ՀՀ պետական մրցանակի:

Գրքի հեղինակներն են անվանի գիտնականներ, ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակիցներ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղայանը, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանը և արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանը:

Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ տվյալ հրատարակության մեջ ճարտարապետությունը դիտարկվում է տարածական կամ պլաստիկական արվեստների (նկարչություն, քանդակագործություն, կիրառական արվեստ) հետ մեկտեղ, որն ավելի տեսանելի է դարձնում դրանց պատմական զարգացման օրինաչափությունները և ամբողջական՝ ընդհանուր պատկերը: Հիշեցնենք, որ դա արվում էր նաև կերպարվեստագիտության սկզբնավորման փուլում, երբ շինարարական պրակտիկան ու կերպարվեստը չէին առանձնացվում միմյանցից՝ կազմելով ուսումնասիրության միասնական դաշտ:

Այսպիսով՝ գիրքը ներկայացնում է ազգային ճարտարապետության ու կերպարվեստի ամբողջական պատմությունը՝ հնագույն շրջանից մինչև XXI դար: Բաղկացած է տասնմեկ գլխից, որոնք իրենց հերթին՝ ըստ ժամանակագրության, արվեստի տեսակների կամ առանձին հուշարձանների, տրոհվում են ենթագլուխների և բաժինների: Աշխատության կառուցվածքն ընդհանուր առմամբ արտացոլում է հայ արվեստի պատմության ընդունված պարբերացումը՝ առանձին կարևոր ճշգրտումներով: Հարկ է նշել, որ մենագրության հեղինակները ձգտել են հնարավորինս առարկայական լինել և խուսափել են խնդիրների նկատմամբ զուտ անհատական մոտեցումից, ինչպես նաև վիճահարույց վարկածներից: Շարադրանքն ակադեմիական է՝ բառիս լավագույն իմաստով:

Գրքի առաջին գլխում դիտարկվում է Հայաստանի հնագույն արվեստը՝ սկզբնավորումից մինչև մ. թ. ա. X դար: Այն ներկայացված է կիկլոպյան կառույցների (բերդշեներ), Մոխրաբլրի, Շենգավթի ու Մեծամորի համալիրների, մեգալիթյան հուշարձանների (այդ թվում՝ վիշապների),

ժայռանկարչության, խեցեղենի և քանդակի օրինակով: Ըստ էության, սա բուն հայ արվեստի նախապատմությունն է, որին հաջորդում են Արարատյան թագավորության (մ. թ. ա. IX–VI դդ.), Երվանդունիների (մ. թ. ա. IX–VI դդ.) և հելլենիստական (մ. թ. ա. II–մ. թ. III դդ.) Հայաստանի ճարտարապետությանն ու կերպարվեստին վերաբերող երեք գլուխները: Դրանք ևս - մեկ անգամ հաստատում են, որ հնում հզոր պետականությունը ծնում էր հզոր մշակույթ, մինչդեռ նրա խարխլումը՝ հանգեցնում ինչպես հասարակական, այնպես էլ ստեղծագործական անկման: Հատկանշական է, որ արդեն հեթանոսության ժամանակաշրջանում հայ արվեստը հստակորեն դրսևորեց իր առանցքային հատկանիշներից մեկը, որը մեծապես կանխորոշեց նրա յուրահատկությունն ու զարգացման հետագա ընթացքը, այն է՝ զանազան մշակույթների ներգործությունը համատեղելու, Արևելքի և Արևմուտքի գեղագիտական ըմբռնումները սինթեզելու, միաձուլելու զարմանալի կարողությունը:

Քրիստոնեության ընդունումը Հայաստանում (301 թ.) բացեց ազգային մշակույթի պատմության ամենավառ, փառահեղ էջերից մեկը: Նոր գաղափարախոսությունն ու գեղագիտությունը, ինչպես և ողջ քրիստոնյա աշխարհում կանխորոշեցին միջնադարյան հայ արվեստի բովանդակությունը, իսկ դրանց ուրույն, ճանաչելի դեմքը ձևավորվեց տեղական պլաստիկական ավանդույթների և օտարածին ազդեցությունների բարդ, բայց օրգանական միախառնության արդյունքում: Պատմական այդ նուրբ գործընթացները վերլուծված են գրքի հինգերորդ, վեցերորդ ու յոթերորդ գլուխներում: Համապատասխան նյութը ներկայացված է հայ միջնադարյան արվեստին բնորոշ ծավալատարածական լուծումների, պատկերագրական տիպերի և ոճական ուղղությունների, նաև՝ պահպանված հուշարձանների ողջ բազմազանությամբ: Բացի այդ՝ նմանօրինակ հրատարակությունների համար մինչ օրս անանախադեպ մանրամասնությամբ են լուսաբանված ազգային գաղթավայրերի գեղարվեստական մշակույթն ու արտասահմանյան հավաքածուներում պահվող հայատառ ձեռագրերը: Գրքի սույն հատվածի հեղինակներին՝ միջազգային վարկ ունեցող անվանի միջնադարագետներին, հաջողվում է համոզիչ կերպով ցույց տալ, թե ինչու է հայկական մշակույթի հատկապես այս էջը համարվում դասականության շրջան և ճանաչում վայելում աշխարհով մեկ:

Այդուհանդերձ, առավել մանրամասն շարադրված է նոր և նորագույն կերպարվեստին վերաբերող բաժինը, որը կազմում է գրքի ուղիղ կեսը: Այստեղ օգտագործվել ու դրանով իսկ գիտական շրջանառության մեջ է դրվել փաստական հսկայածավալ նյութ, ընդ որում, մի շարք վերանայված, ավելի ստույգ վերագրումներով ու թվագրումներով: Հատկապես մեր օրերի գեղարվեստական մշակույթին վերաբերող հատվածը շարադրելու բարդություններից մեկն այն էր, որ հետազոտողներն այստեղ գործ են ունեցել գեղարվեստական կենդանի իրողության, մշակութային անավարտ պրոցեսների հետ, ուստի սահմանափակ են եղել վերջնական եզրահանգումներ անելու, գնահատականներ տալու մեջ: Սակայն հեղինակների հայեցակարգը և հետազոտական մեթոդները դարձյալ միանգամայն հստակ են ու հիմնավոր: Գիտական անաչառությունը սկզբունք է մնում պատմական անցյալի նույնիսկ ամենավիճելի, ոչ միանշանակ էջերին անդրադառնալիս: Այսպես՝ իրավացիորեն նշելով 1930–1950-ական թվականներին հայ կերպարվեստի կրած «անդառնալի կորուստները», հեղինակները միաժամանակ չեն անտեսում նույն այդ շրջանում ունեցած իրական ձեռքբերումները, գեղագիտական մնայուն արժեքները: Նման մոտեցումով, առանց սուբյեկտիվ նախապաշարումների, մեկնաբանվում է նաև հետխորհրդային շրջանի քաղաքաշինությունն ու քանդակագործությունը՝ չնայած մասնագիտական այն տարակարծությանը, որ կա որոշ կառույցների ու հուշարձանների մասին:

Բաժնի մեկ այլ առանձնահատկություն, որ կուզեինք ընդգծել, նորահայտ, մոռացված կամ անտիպ նյութերը լայնորեն օգտագործելու հանգամանքն է, մանավանդ, երբ դրանք պատմական այս կամ այն շրջանը ներկայացնելու գրեթե միակ

աղբյուրն են: Այդպիսի հատվածներ են, մասնավորապես, XIX դարի և XX դարասկզբի արևելահայ կերպարվեստին ու Հայաստանի առաջին հանրապետության գեղարվեստական կյանքին նվիրված ենթագլուխները, որոնք գրվել են առավելաբար ժամանակի մամուլից քաղած սակավաթիվ փաստերի և արխիվային վկայությունների հիման վրա:

Գրքի պատկերային մասն ընդգրկում է մեծաքանակ գունավոր վերատպություններ, որոնք աշխուժացնում են շարադրանքը, ըստ որում, ոչ միայն նպաստում դրա ընկալմանը, այլև զգալի չափով լրացնում: Մեծ արժեք է ներկայացնում գրքի վերջում զետեղված մատենագիտական ցանկը, որը բովանդակում է նաև մասնագիտական նոր-բագույն գրականությունը: Տվյալ դեպքում, երևի թե, արդարացված է հղումների, գիտատեղեկատվական ընդարձակ ապարատի բացակայությունը, որը թույլ է տալիս չշեղվել հիմնական տեքստից: Տպագրության որակն օրինակելի է:

Թեպետ հրատարակությունը նախատեսվել է որպես բուհական դասագիրք, այն լուծում է շատ ավելի լայն խնդիրներ: Մեր առջև, իրոք, գիտական հիմնարար աշխատություն է, որը, վստահ ենք, լիարժեք կբավարարի թե՛ բարձրագույն դպրոցի, թե՛ ակադեմիական հայագիտության առաջադրած պահանջները: Միևնույն ժամանակ, սա հիանալի նվեր է բոլոր նրանց համար, ովքեր սիրում ու գնահատում են ազգային մշակույթը:

ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ